

ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ



Լճառ :

Հին երբ արծաթը կատարեալ մետաղներու կարգէն կը սեպէին . բայց հիմակուան բնագիտները բոլոր մետաղները մէկ կարգի վերածեցին , որոնց մէջ գլխաւորները սեպուած են իրենց անայլայլութե կարգովը փլածինը , ոսկին ու արծաթը . աս այլայլութիւն ըսածնիս ուրիշ բան չէ , բայց եթէ որ և իցէ մետաղին թրթուածնի մէջ քիչ շատ լուծուիլը . վասն զի արծրթի՝ և ոսկիի պէս յար-

գի մետաղները թացութենէ ու չորութենէ ամենեւին չեն առներ , ու որ և իցէ կլիմայի տակ նոյն ազնուութիւնը ունին :

Բնութեան մէջ շատ տեսակ արծաթ կը գտնուի . իսկ գետնէն ելածը երբեմն բնական է , երբեմն կտոր կտոր , երբեմն կանոնաւոր ձևով բերեղացած և կամ ու թանկիւնի խորանարդ : Բնդհանրապէս բնական արծաթը զուտ ու սակաւագիւտ է . ընդ-

հակառակն մէկալ տեսակները՝ ուկւոյ, մինդեղի, պղնձի ու երկրթի խառնուրդ ունին։ Նարիրը, ծծումբը, մինդեղը, քլորը երբոր արծրթի հետ խառնուին՝ կ'ըսուին արծաթ ծարրական, ծծմբային և այլն։

Արծաթը շատ տեսակ է. ուստի տեսակները մէկմէկէ իրենց կարմիր՝ սև ու ճերմակ գոյներովը կը զատուին։

Վաղղիայի մէջ գլխաւոր արծաթահանքերն են իգերի մէջ Ալէմոն ըսուած տեղին արծաթահանքը, ուսկից կ'ելէ բնական՝ ծծմբախառն, կարմիր արծաթ, ու արծրթի քլորուտ. իսկ վերին Հւենոսի մէջ սրբոյն Սարիամու արծաթահանքինը աւելի արծաթախառն պղնձի ծծմբուտ է։

Վերմանիայի մէջ եղածներն են Ֆրէյպերկի, Շէյնպերկի ու Հարցի արծաթահանքերը։

Նորվեկիայի Վէնիկսպերկնահանքին մէջ եղածը շատ երևելի է հալըստութեն ու մասնաւոր դրիցը համար. վասն զի երակները որ ինչուան մէկ մեթր թանձրութի ունին՝ մէկմէկու ուղղահայեաց ու զուգահեռական են. արծաթին տեսակը խիստ աղէկ է. երբեմն մեծամեծ կտորներ ալ կը գտնուին։

Սպանիայի արծաթահանքերը հիմա խիստ քիչցած են, բայց ինչուան

հիմա ալ երևելի է Նիտալուսիայի մէջ Սուատալքանալի կարմիր արծրթին արծաթահանքը։

Հայաստանի արծաթահանքերուն մէջ գլխաւոր սեպուածներն են Այաբերդի ու Րաղէշի մէջ գտնուածները, թէպէտ և գրեթէ երեսի վրայ ձգուած են։

Մերիկա Փերուի ու Սեքսիկոյի մէջ գտնուածները շատ հարուստ են, մանաւանդ Փոթոսի ըսուած լեռան վրայի եղածը, որ երբոր նոր բացին՝ առջի երակները զուտ ու մաքուր արծրթի կտորներ էին. բայց քանի փորեցին պակսեցաւ, ու հիմակուանը առջինին համեմատութեամբ գրեթէ ոչինչ է։

Եթի ատեն գտնուածներուն մէջ խիստ երևելի են նաև Սեքսիկոյի արծաթահանքերը, ու երկրիս վրայ ուրիշ տեղ ասոնց նմանը գտնուած չէ. վասն զի աշխարհագրի մը խօսքին նայելով, միայն 1803ին մէջ ելածին գումարը 665,000 քիլոկրամ եղեր է։

Բայց որպէս զի աղէկ իմացուի թէ Լաբոպայի ու Սիիայի արծաթահանքերը ինչ համեմատութի ունին Մերիկայի արծաթահանքերուն հետ, հոս տեղս այլևայլ երկիրներէ տարուան մը մէջ ելած արծաթին կշիռը միջին համեմատութեամբ մը դնենք։

ԱՍԻԱ ու ԵՒՐՈՊԱ	Ժւեռ
Սիպերիա	17,500
Մաճառստան	20,000
Աւստրիա	5,000
Հարց ու Հասսիա	5,000
Սաքսոնիա	10,000
Նորվեկիա	10,000
Շուէտ	5,000
Գաղղիա	
Սպանիա	
Բոլորին գումարը	72,500 քիլոկր.

ԱՄԵՐԻԿԱ	Ժւեռ
Հիւսիսային Ամերիկա	600,000
Հարաւային Ամերիկա	275,000
Բոլորին գումարը	875,000 քիլոկր.

Ղաւջները կը կարծէին թէ արծաթը որքսիտ կամ ժանգ չունի. բայց երևելի բնագէտներու փորձերովը յայտնի իմացուեցաւ թէ արծաթն ալ հալեցնելէ գետքը թէ որ յանկարծ պա-

ղեցնես՝ որքսիտ կը կապէ։ Եւ որ բռնակով արծաթը լուծես, շոգիացնես ու դիրտը հալեցնես, ան պարող նիւթը կը ձեւանայ՝ որ Գթիւտաթը՝ կ'ըսուի։

1 Ճէնէնէ՛ Բաշէ :

Իհերեղացած արծրթի բորակու-
տով կ'իմացուի որ և իցէ հեղուկի
մէջ որչափ քիմիական աղ գտնուիլը :

Արծրթի մէջ պղինձ խառնելը անոր
համար է որ աւելի կարծրութիւն ու
պնդութիւն առնէ արծաթը . անոր
համար արծրթ է ստակներու մէջ ալ
պղինձ կը խառնեն չափով :

Հոս գրուածը Հարաւային Ամե-
րիկայի արծաթահանքին պատկերն է :

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Նշելոյզ կամ () Դահան գործի ' :

(ՆՁԵԼՈՅԶ կամ () Դահան ը-
սուած գործիքը բնաբանական փոր-
ձերու մէջ շատ կը գործածուի . անոր
համար թէպէտ ուրիշ անգամ ալ ա-
սոր վրայ խօսեցանք¹, բայց հոս աւե-
լի երկայն տեղեկութիւն մը տանք :
Այս գործիքը Աթոն Աուերրիք անու-
նով գերմանացին հնարեց 1650^{ին} ա-
տենները , ու իրմէ վերջը եկող ուրիշ
շատ բնագէտներ կատարելագործե-
ցին :

Ինչուան ան ատենները դատար-
կութիւնը՝ այսինքն առանց օդի միջոց
կամ տեղ գտնուիլը նոր բան մը կ'ե-
րեւար բնագէտներուն , թէպէտ և
անկարելի բան ալ չէ կ'ըսէին . բայց
Աուրրիքի անունով իտալացի բնա-
գէտէն առաջ մէկը չեղաւ որ աս բա-
նիս փորձն ընէ . անոր համար ալ օդա-
չափի փորձերն ալ ինչուան ան ատեն-
ները դժուար էին , ու բնագէտք շատ
աշխատանք ու փորձեր ընելէն ետեւ
հազիւ թէ մէկ քանի բան միայն ի-
մացան : Իսկ Նշելոյզ գործիքը գրա-
նուելէն վերջը աս փորձերն ալ դիւ-
րացան . վասն զի անով ուղած ատեն-
նին օդը կը պարպէին , և ան դատարկ
միջոցին մէջ ամէն տեսակ մարմնոց
վրայ փորձ կ'ընէին : Այս գործիքիս

վախճանն է օդը պարպել , անոր հա-
մար օդահան կամ Նշելոյզ դրեր են
անունը :

Այս գործիքս իրեք գլխաւոր մաս ու-
նի . մէյմը մետաղէ երկու հատ գլա-
նաձև խողովակներ , որոնց մէջ մէյմէկ
միոց կայ , ու լծակով մը վեր վար կը
շարժին : Այս միոցները թէ վեր ել-
լեն՝ թէ վար իջնին և թէ ուրիշ ինչ
դրից մէջ ալ ըլլան , ամենեւին դրսի
օդը իրենց քովերէն ներս չկրնար մըտ-
նել : Այսոցներուն վրայ մէյմէկ փեղ-
կեր կան , որ վարէն հրուելով դէպի
վեր կը բացուին . ուստի թէ որ վարի
մղումը վերինէն աւելի է , ան ատեն
աս փեղկերը կը բացուին , ապա թէ
ոչ՝ գոց կը մնան : Արկրորդ մասն է
մէկ խողովակի ծակ մը , որ գլանաձև
խողովակներուն տակէն ինչուան գոր-
ծիքին վրայի մետաղէ սկաւառակին
մէջտեղը կը հասնի : Արրորդ մասն
է մետաղէ սկաւառակը , որ քանի մը
գծաչափ հաստութիւն ունի . ասոր
վրայ ապակէ աման մը կը դնենք գըլ-
խիվար , ու մէջի օդը ուղածնուս չափ
կրնանք պարպել . աս ամանը ապակիէ
չինած է , որպէս զի մէջի փորձերը
դրսէն երեւան : Ամանին շրթունքը
պէտք է քիչ մը ճարպ կամ ուրիշ
թանձր եղ քսել , որպէս զի մետաղէ
սկաւառակին հետ աղէկ կպչի . աս
գլուխութիւնը անոր համար է որ երբ
ամանին մէջի օդը կը սկսի անգայտա-
նալ , դրսի օդը ան ծակերէն չկարե-
նայ ներս մտնել : Աւստի երբոր կ'ու-
ղես բանի մը վրայ փորձ ընել , պէտք
է առաջ ամանին տակը դնես ու ետ-
քը մէջի օդը պարպես :

Արչափ որ ներսի օդը անօսրանայ ,
այնչափ գործիքին միոցները դժուար
կը շարժին . վասն զի ներսի անգա-
յտացած օդին առաձգութիւնը տկար
ըլլալուն , դրսի օդը միոցներուն վրայ
կը ծանրանայ . անոր համար զանոնք
վար իջեցնելու ատեն ամենեւին ոյժ
տալ հարկաւոր չէ . մթնոլորտին ճնշ-
ւումը բաւական է զանոնք վար հրե-
լու : Ինագէտք շատ աղէկ մտածեր

¹ Գ. Machine pneumatique.

² Տես երես 142 :